ՀՀ ԿԳՄՄՆ հանրակրթության վարչության պետ

ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ՀՀ ԿԳՄՄՆ հանրակրթության վարչության

փորձագետ ԿԱՐԻՆԵ ԲԱԲԱՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ, ՀՈՒՆԻՍ, ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Մասնակցել եմ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում գործող իրավական ակտերի վերլուծությանն ու լրամշակմանը:

«1146.Հանրակրթության ծրագրի» «11016. «Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում»» միջոցառման շրջանակներում կազմել եմ 2023 թվականին 1-ին, 3-րդ և 4-րդ դասարանների վերահրատարակվող դասագրքերի գնման հայտերը, որոնց հիման վրա Նախարարության և հրատարակչությունների միջև կնքվել են «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրեր»: Հարկ եմ համարում նշել, որ առաջին անգամ պետբյուջեի միջոցներով Նախարարության պատվերով 2023 թվականին ձեռք են բերվում բրայլյան տառատեսակով տպագրվող դասագրքեր, որոնց գնման հայտը կազմվել է իմ կողմից: Բացառությամբ 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների կազմել եմ «2023-2024 ուստարում 1-12 դասարաններում գործածության երաշխավորված դասագրքերի» վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի նախագիծը: Երկրորդ, հինգերորդ, յոթերորդ, տասներորդ դասարանների դասագրքերի ստեղծման համար հայտարարված դրամաշնորհային մրցույթների փորձագիտական աշխատանքների անցկացման նպատակով հավաքագրվել և ձևավորվել են փորձագիտական խմբեր: Մրցութային հանձնաժողովների ձևավորման վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարի N 2159-Ա/2, 23.11 2022թ. և N 2189-Ա/2, 28.11.2022թ. հրամանների նախագծերում կատարել եմ փոփոխություններ /վարչության պետ, քարտուղար/: Որպես մրցութային հանձնաժողովների անդամ և քարտուղար մասնակցել եմ բոլոր աշխատանքներին: 2023 թվականի հունիսի 1-ին հրավիրվել է մրցությանն հանձնաժողովի հերթական նիստ, որտեղ իմ կողմից բացվել և ներկայացվել են հայտարարված

դրմաշնորհային մրցույթի մասնակիցների 2-րդ դասարանի ստեղծված դասագրքերի հայտերը: Կատարվել է հայտերի քննարկում: Արձանագրվել է մրցությանն հանձնաժողովի թվով 9 նիստ: Հանրակրթության վարչության կողմից կազմել և ներկայացրել եմ տարաբնույթ զեկուցագրեր ՀՀ ԿԳՄՍՆ ֆինանսաբյուջետային, գնումների, կազմակերպատնտեսական, իրավաբանական, արտաքին կապերի և սփյուռքի և մյուս վարչություններին:

«1146.Հանրակրթության ծրագրի» «11016.«Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում»» միջոցառման շրջանակում իրականացվել են 2024-2026 թվականների ՄԺԾԾ-ի պահանջվող աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ են կրում:

2022-2023 ուստարվա մեդալի հավակնորդ սովորողների «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից կենտրոնացված կարգով պետական ավարտական քննությունների ընթացքը և քննական աշխատանքների ստուգումը վերահսկելու նպատակով ս/թ հունիս ամսին որպես հանձնաժողովի նախագահ մասնակցել եմ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի թիվ 4 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ում անցկացրած քննություններին:

Որպես դպրոցի Խորհրդի անդամ, մասնակցել եմ Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 66 հիմնական դպրոցի, Երևանի Մ. Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոցի, Երևանի Ս. Հովսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոցի, Վաղարշապատի Մ.Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցի, Երևանի Մխիթար Սեբաստացու կրթահամալիրի կառավարման խորհուրդների աշխատանքներին:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հետ աշխատանքային պայմանագրերի լուծման հետ կապված ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով մասնակցել եմ փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքներին:

Գործող օրենքների և իրավական ակտերի շրջանակում քաղաքացիներին տրամադրվել է բանավոր և գրավոր տեղեկատվություն, ուսումնասիրվել և պատասխանվել է քաղաքացիների բազում և տարաբնույթ դիմումներին:

Կ.Բաբայան

31.07.2023թ.